

النبى اادو

محلّة جمعيّة القاهرة الخيريّة الأزمينيّة العلامّة

# ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼՋԻՐԷԻ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԵՆԸ

المدير المسئول ا. صاروخان - ١٥ شارع عماد الدين - تليفون ٥٥٦٣٦ - صندوق بريد ٧١٧ القاهرة

Է. ՏԱՐԻ

ԹԻՒ 4

ՄԱՅԻՍ — ՅՈՒՆԻՍ 1963

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Կարելի չէ ժխտել, որ ազգի մը ապագան իր երիտասարդութիւնն է: Սերունդներու յաջորդականութեան հոլովոյթին մէջ՝ եթէ նորը, ըստ քաղաքականութեան ու գիտական նոր նուաճումներուն, որոշ աւանդութիւն մը չունենայ մախտոյ սե - բունդին վրայ, կարելի չէ պատկան ազգին ապագան աւելի բարձր տնայնել ու գտնել: Ամէն սերունդ քայլ մը դէպի առաջ եւ աստիճան մը աւելի վեր պիտի ընթանայ, որպէսզի ապագայի ազգին յառաջդիմու - քիւնը:

Այս գիտակցութեամբ, Հ. Բ. Ը. Մի - ութեան վարիչները, հիմնադիրներուն բարոյական կտակէն ու ժամանակի պահանջ - ներէն առաջնորդուած, եւ հազիւ վեց տուած Եղեռնին յաջորդող գաղթական - կան տագնապներուն, իրենց ուշադրութիւ - նը կեդրոնացուցած են նոր սերունդի դաս - տիարակութեան գործին վրայ: Քսանական թռականներէն սկսեալ, ամենուրեք բաց -

ուած են Հ. Բ. Ը. Մ.ի մասնաւոր դրպ - րոցներ, ըստ առ այդ, գանազան կտակն - բու տրամադրութեանց եւ տեղական պա - հանջներու: Հագարաւոր հայեր՝ ամէն գա - դուրէ ներս, իրենց սկզբնական, երկրոր - դական եւ բարձրագոյն ուսումը կը պար - տին Միութեան: Իսկ տասնեակ մը տարի - ներէ ի վեր՝ գարկ տրուած է համալսարա - նական ուսումնաց եւս, յատուկ մարմինն - բու եւ պիւտնէ-հիմնադրամներու միջո - ցաւ:

Պաշտօնական վարժարանային ուսումնէն ետք, մասնագիտական կամ թեքնիք, ձե - ռական կամ գեղարուեստական պատրաս - տութիւններու ալ քաջալեր եւ օժանդակող հանդիսացած են Հ. Բ. Ը. Մ.ի մարմին - ները:

Ապա, նկատուած է, որ այս շրջանակ - ներէն դուրս, այլ միջոցներով օտար վար - ժարաններ յանախոյ կամ կանուխէն գոր - ծի աշխարհը նետուած երիտասարդ հայեր կը գտնուին անհանոյ հաւանականութեանց առջեւ. այդ է՝ աստիճանական, յամբա - քայլ անձնատուութիւն ու ծագումին, տն - դական հակազդեցիկ զօրաւոր պայմանն - բուն, անհարազատ սովորութիւններուն ու բարեբուն ու միջալայրի տարրալուծիչ

ներգործութեամբը :

ծ

Այս ուժացումին առաջքը առնելու մը-տադրութեամբ, մեր մարմինները ձեռնարկած են հաստատմանը երիտասարդական ընկերակցութիւններու, յատուկ ակումբներով, որպէսզի հայ երիտասարդութիւնը՝ իր ազատ ժամերուն՝ հոն յանախելով, ինքզինք միշտ հայ զգայ ու պահպանէ եւ գարգացնէ իր ցեղային առաքինութիւնները ու ձիրքերը: Զարգացնէ՝ մասնակցելով ընկերական եւ մշակութային գործունէութեանց, որոնց ընթացքին պիտի փայլի իր տաղանդը, փայլ տալով իր կարգին համայնքին ու զարդարելով անոր կեանքը:

Մեր մամուլը լայնօրէն կը խօսի այն յառաջդիմութեանց մասին, գորս կ'արձանագրէ հայ երիտասարդութիւնը Հ. Բ. Ը. Միութեան երիտասարդական ակումբներուն. եւ մարգարաններուն մէջ: Իրենց մնայուն զբաղմունքներէն եւ առօրեայ ապարէզէն ետք, հայ երիտասարդուհիներ եւ երիտասարդներ կուզան այս մարմիններուն մէջ ցոյց տալու իրենց վարչական, գեղարուեստական, գիտական եւ ընկերային կարողութիւնները, ի սպաս իրենք իրենց եւ ամբողջ համայնքի անդամներուն:

Այսպէս է, որ ամենուրեք մենք ունինք համայնքային մեր կենցաղը պատկերագրող երիտասարդական երգչախումբեր, նրազախումբեր, քատերախումբեր եւ սփորի խումբեր: Այս խումբերուն մէջ ամէն օր երեսան կուզան նոր տաղանդներ, ուրոնք կը փայլաբերին, ի հարկին, Միութեան կողմէ, վաւերական աստիճանի հասնելու իրենց նիզին մէջ, գործնապէս:

Այսօրինակ մարմին մը ունեցանք նաեւ Գահիրէի մէջ, ասկէ ուր տարի առաջ: Այս փայլաքի Հ. Բ. Ը. Մ.ի երիտասարդաց Մշակութային Մարմինը տարուէ տարի յառաջդիմեց, ղեկավարութեամբը անձնուէր տարբերու, եւ այսօր հասած է նախանձելի աստիճանի:

Ինչպէս մեր բոլոր երիտասարդական ընկերակցութիւնները, մեր երիտասարդաց Մ. Մարմինն ալ, Հ. Բ. Ը. Մ.ի տեղական շրջանակը բզեւորելէ ետք, գործողներ կը

հայրաքաղաքէ միւս ակումբներուն: Մենք հրպարտութեամբ կ'արձանագրենք, որ գաղութիս բեմերուն վրայ իբրեւ խօսող, երգող, նուագող կամ դեր խաղացող մշակութասէր երիտասարդուհիներուն եւ երիտասարդներուն մէջ շատեր կան, որոնք անցած են Ե.Մ.Մ.ի սեմերէն: Այս երեւոյթը կը սփռուի մեզ եւ կը վարձատրէ:

Սակայն, տրուած ըլլալով, որ ի վերջոյ, Հ. Բ. Ը. Մ.ը ամբողջ ազգին պատկանող կազմակերպութիւն մըն է, հայ միւս միութիւնները պէտք է մեր ուժերը բալուրին համար օգտագործելի վիճակին մէջ պահեն ու երբեք չձգտին, չհիստորիս իրացնել անոնցմէ մէկը կամ միւսը, շրջաններով զանոնք պաշտօններով կամ այլ աշխարհիկ առաւելութիւններով, որոնք դուրս կը մնան Հ. Բ. Ը. Մ.ի սոսիմիկ սահմաններէն:

Այս շիտոդութենէն ետք, կ'արձանագրենք այստեղ, նոյնիմէն Ե.Մ.Մ.ի վարչութեան քարգմտնը հանդիսանալով, որ երիտասարդական շարժումը լայն ծաւալ ստացած է եւ աւելի ծաւալելու հաւանականութիւններ կան: Շարքական մէկ դասախօսութիւն կամ հաւաքոյթ, այստեղ, անբաւարար կը նկատուի: Զկայ քատերական կամ գեղարուեստական լայն դաշտ տեղի անձկութեան պատճառով:

Հետեւաբար, պարտք կ'իյնայ մեր կազմակերպութեան վրայ, որ փայլաքին մէջ կեդրոն տեղ մը ստեղծուի աւելի յարմար հաւաքավայր ուր երիտասարդութեան ընծայուին աւելի լայն միջոցներ, որոնց ըստեղծումը յանախ երիտասարդները իրենք ինք կրնան իրականացնել:

Ճիշդ է որ Հ. Բ. Ը. Մ.ի վերին մարմինները ի վիճակի չեն այսօր նոր գոհողութիւններ ընելու: Բայց կարելի չէ մտնալ, որ ողջ ու ներկայ եգիպտահայ ժողովուրդ մը ունինք հոս, հայրենիք դարձողները կամ այլուր մեկնողները չնչին տակոս մը միայն հաշուելով:

Պարտողականութիւն է մտածել որ մեր գաղութը ի վիճակի չէ այլեւս նոր գոհողութիւններ ընելու օտար վարժարաններ

յանախոզ եւ գործի ասպարէզ նետուած մեր երիտասարդութեան համար :

Երիտասարդութեան վերակազմութեան հոգը՝ օրակարգի առաջին հարցն է այսօր :

## ՍԵՒԱՆ

### Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Մխիթարեան ուխտէն

Է՛յ, Սեւանայ սիրուն լընակ,  
Գուն աստղերու մըկըրտարան.  
Գլխուդ արեւն ոսկեղէն քազ,  
Երկինքդ գոյն ու ծիածան :

\* \* \*

Կախուած ես դու անհունէն վար  
Ոսկի քելով արեգակի .

Ա՛յս, ափերուդ ըլլայի ծառ

Ու խորքիդ մէջ ցոլանայի :

\* \* \*

Ձուրերդ մաքուր, ալիքներդ լուրթ,  
Ու վրփուրներդ կապոյտ ծաղիկ,  
Ի՞նչպէս տամ ես սքաւի յագուրդ  
Երբ հոս չունիմ բոյն երջանիկ :

\* \* \*

Ո՞ր Գեղամայ լեռն ես ելլեմ,  
Գիւղերն՝ ընկեր, վարդերը՝ բոյր,  
Ու ցոլանամ ցոլեքերուդ դէմ,  
Նարիկսի պէս ոսկեգանգուր :

\* \* \*

Ոսկի բաժակ պէտք է բռնեմ,  
Ըմպելու սուրբ ու զով ջրերդ .  
Խաչանման աչքերս օծեմ,  
Օրհնելով քեզ աստղերուն հետ :

\* \* \*

Տենչ մը սրտէս գէշ հոս ծաղկեր,  
Ծաղկեր ըլլար խոշոր շուշան,  
Ու ծարաւի զով ջուր խնդրեր,  
Բաժակն ըլլար ուրախութեան :

\* \* \*

Հեռուներէն ես ըզգայի  
Կարօտն ամէն կարօտներու,  
Եկուորներուն աչքերս տայի  
Ինձ համար ալ երազելու :

Սեւան, 22, 8, 1960 —

## ԲԱՐԵՐԱՐ

### ՎԱՀՐԱՄ ԻՒԶՊՍՉԵԱՆԻ ՄՍ.ԸԸ

Յաւով կ'արձանագրենք Հ. Բ. Ը. Մխիթեան Բարերար Անդամ Վահրամ Իւզպազեանի մահը, ուր տեղի ունեցաւ 18 Յունուար 1963ին Սէյնթ Փիթըրզըրկէ մէջ (Փըլլորիտա) :

Ծնած էր 1878ին Լենինականի մէջ : Ուսումը կատարելագործած էր Փեթրոկոստի մէջ եւ վկայուած էր իբրեւ Մեքենական ճարտարագէտ : 1915ին ճարական կատարավարութիւնը զինքը դրկած էր Միացեալ Նահանգները շուկառքի վայրաչարժներու գնումը կատարելու համար : Այդ թուականէն ի վեր ապրած եւ դործած էր Միացեալ Նահանգներու մէջ, որպէս ճարտարագէտ :

Ողբացեալը 1950ին Հ.Բ.Ը. Մխիթեան յանձնեց 10.000 տոլարի դումար մը, որ պէս կրթաթոշակ արուելու համար Մեկքոնեան կրթ. Հաստատութեան չըջանաւարտներուն : Այդ կրթաթոշակէն օգտուեցան 10 չըջանաւարտներ որոնք ուսանեցան Ամերիկեան համալսարաններու մէջ :

Գալցոցաշինութեան հանդանակութեան մասնակցեցաւ 5000 տոլարով : Այդ գումարով շինուեցաւ Չահլէի Իւզպազեան մանկապարտէզը : Իսկ անոր կից սրահի մը շինութեան համար ալ նծուիրեց 750 տոլար :

1960ին, Մխիթեանս յանձնեց 25.000 տոլարի նուիրատուութիւն մը, իբրեւ «Վահրամ Իւզպազեան Հիմնադրամ» որ յետագային բարեգործի հասնութեամբ յատկացուեցաւ իր անունը կրող նախակրթարանի մը շինութեան, Յորդանանի մայրաքաղաք Ամմանի մէջ, ուրուն բացման հանդիսութիւնը կատարուեցաւ վերջերս :

Իր բարեգործութիւնները ոսկի տառերով արձանագրուած են Հ.Բ.Ը. Մխիթեան նուիրատուներու ոսկեմատենանին մէջ, իսկ անունը երախտագիտութեամբ պիտի յիշուի Իւզպազեան վարժարաններէն ելլող հայ պարմանիներու եւ պարմանուհիներու կողմէ :

# ԳԱՅԻՐԷԻ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԷՆ

— Պէջրութի «Թէքէեան» վարժարանի ուսուցչական կազմը Գաւիթի մէջ կատարած իր պտոյտներուն եւ այցելութեանց շարքին, չմոռցաւ նաեւ Միութեանս գրասենեակը: Արդարեւ, Ուրբաթ, 19 Ապրիլ, երեկոյեան, հաճոյքն ունեցանք ընդունելու Հայ Մշակոյթի մեր լիբանանահայ գործիչները, որոնք առաջնորդուեցան հանդիպակաց «Լա Ժէօնէս» սրահը, ուր մեր երիտասարդաց Մշակութային Մարմինը կազմակերպած էր Չատուան ականդական հաւիթասեղանը: Մեր Ժրաջան օրիորդները եւ երիտասարդները շատ կանուխէն եկած էին կազմակերպելու անթերի սպասարկութիւն մը, եւ երբ մուտք գործեցինք սրահէն ներս, մեր աչքերուն առջեւ պարզուեցաւ երկնեայ ծաղիկներու մէջ գոյնըզգոյն հաւիթներով, հայկական շէօնէսով ու կախալով, աշխարհի համոտներով

ատենապետին եւ վարչութեան անդամներուն, առաջնորդուեցան իրենց վերապահ ուսած տեղերը եւ կարճ դադարէ մը յետոյ, մեր աշխոյժ եւ շնորհալի վարչականները սկսան վայելչօրէն սպասարկել եւ մեր յարգելի հիւրերը ուրախութեամբ կը դիտէին երիտասարդութեան մէջ ծայր տուած եռուզեռ եւ հայ մշակոյթի սպասարկունեցը մեծարեկող և ունեղազին տրամադրութիւնը: Հաւաքոյթը բանալով Ստենապետ Տիար Քիւրքեան, բարի գալուստ մաղթեց լիբանանահայ մեր կրթական գործիչներուն, ներքոյեց հայ ուսուցչութեան հայրենանուէր աշխատանքը, եւ ւրի ուրի մէջ հայ նոր սերունդը հայ հողիով խմորելու եւ դաստիարակելու դժով կատարած գոհարեցութիւնը:

Երիտասարդացի վարչութեանէն Պր. Միքայէլ Ժամկոչեան, «Չատուան գու-



եւ զովացուցիչներով յարգարուած ճոխ սեղաններու հաճելի տեսքը:

«Թէքէեան» վարժարանի ուսուցիչներու խումբը, ինչպէս եւ Լիբանանի կրթական նախկին քննիչ Տիար Ասատուր Մարկարեան, ընկերակցութեամբ Միութեան

նախը հաւիթի խորհուրդը՝ խորագրուած շահեկան գրութեան ընթերցումը ըրաւ: Օր. Սոնա Ժէճկեան արտասանեց, Տիկին Մարիօ Յակոբեան, իր հմայելի ճախով մեզ դիւթեց, մեներգելով Աշոտ Գուսանի «Դու անմահ» քաղցրայոյզ երգը: Պր. Սարգիս

Պալեան, Միքայէլ Ժամկոչեանի Արմոնիքի  
Ընկերակցութեամբ երգեց Բարձր Սարերը,  
կորովի եւ զօրաւոր շունչով:

Ոսք առաւ «Թէքէեան» վարժարանի  
Տնօրէն Պր. Եղ. Պապայեան, որ հմտա-  
լից ճառով մը ներկայացուց Բարեգործա-  
կանը եւ անոր կատարած հայրենասիրա-  
կան եւ մարդասիրական ազնիւ գործը,  
սեղմ բայց կարեւոր գիծերու մէջ: Ծան-  
րացաւ լիբանանահայ կրթական, առողջա-  
պահական, մարզական եւ զեղարուեստա-  
կան մարզերուն մէջ մեր Միութեան կա-  
տարած դերի մասին եւ հրաւիրեց մեր նոր  
սերունդը ամուր կառչել Հայ. Բարեգոր-  
ծական Ընդհ. Միութեան դրոշին, որ խոր-  
հրդանշանն է եղբայրական գործակցու-  
թեան եւ ազգասպառնական անվհատ պայ-  
քարի:

«Թէքէեանի» յարգամեծար ուսուցչու-  
հիներէն օրիորդներ Հայրապետեանն եւ Կա-  
րապետեան իրենց դրաւիչ ճայնելով հայ-  
րենական երգեր երգեցին, իսկ ասմունքի  
վարպետ Պր. Վալդան Չարբեան, արտա-  
սանեց, երգեց եւ ներկայացուց մեր գրա-  
կան անդամանէն զողարիկ էջեր, ուրա-  
խացնելով եւ խանդավառելով իր ունւր-  
դիները:

Երիտասարդացէն Վահէ Ասլանեան եւ  
սաներէն Պերճ Գաբրիէլեան, իւրաքանչիւ-  
րը հակիրթի մը վրայ շատ ճարտարօրէն  
գծագրած էր Հ. Բ. Ը. Միութեան խոր-  
հրդանիշը՝ եղբայրական գոյգ ձեռքերը զի-  
րար ամբօրէն սեղմած: Այս աշխատու-  
թիւնները շատ գնահատուեցան եւ արժա-  
նացան մրցանակի: Ընկերական ջերմ եւ  
սրտազին միջնորդութի մը մէջ ժամերը սա-  
հեցան անդալիօրէն, մինչեւ որ «Թէքէ-  
եան» ուսուցչական խումբին յարգելի տը-  
նօրէնը մեկնելու ազգանշանը տուաւ: Ա-  
տենապետ Տիար Քիւլքճեանն ողջերթ մագ-  
ից սրտաբուխ խօսքերով եւ շնորհակա-  
լութիւն յայտնեց որ հայ ուսուցիչները  
մոռցած չէին նաեւ մեր սիւրիլի երիտա-  
սարդները որոնք ակնդէտ կը սպասէին ի-  
րենց այցելութեան:

— Զբօսապտոյտ դէպի պառածի պար-  
տէզները: Հ. Բ. Ը. Միութեան Երիտասար-

դաց Մշակութային Մարմինը, Ապրիլ 26ին  
կազմակերպած էր զբօսապտոյտ մը դէպի  
պառածի պարտէզները: Առաւօտեան ժամը  
8ին, շատ հանդատուէտ ինքնաշարժով մը  
40 հոգինոց մեր խումբը ճամբայ ելաւ ու-  
րախ տրամադրութեամբ: Ճամբու ընթաց-  
քին հայ երգը հնչեց եւ ամէնքս, ուրախ  
զուարթ, կը վայելէինք դայնանային ա-  
ռաւօտեան քաղցրիկ զեփիւտն ու ծաղկա-  
բայր օդը: Սանդալառութեամբ կատար-  
ուած ճամբորդութիւնը շատ կարճատեւ  
թուեցաւ մեզի. Հասանք եւ տեղաւորուե-  
ցանք հսկայ ծառերու հովանիներուն տակ.  
Քիչ մը հանգստանալէ վերջ, գործադրու-  
թեան դրուեցաւ օրուան յայտադիրը՝ որ  
կը բաղկանար հետեւեալ մասերէն.—

- 10—12 հեծանիւով արշաւ եւ պտոյտ.
- 12—2.30 ճաշ եւ հանգիստ.

2.30—5.30 զանազան խաղեր:  
Յայտադիրը զոր կը վարէր Օր. Գար-  
տաշեան զօրժարուեցաւ ճշգրութեամբ եւ  
ժամանակը անցաւ շատ հաճելի կերպով:  
պահիկ մը ուսանողները մոռցած էին ի-  
րենց դասերը, մօտալուտ քննութիւնները  
եւ կ'ըմբոշինէին անյազօրէն գեղեցիկ բը-  
նութիւնը: Եւ անսարով մեր թանկագին  
վարչուհիին ազգանշանին, պատրաստուե-  
ցանք վերադարձի: Ժամը 5.30ին մեր ինք-  
նաշարժին մէջ գրաւեցինք մեր տեղերը ու  
ճամբայ ելանք ուրախ զուարթ երգելով եւ  
կատակելով: Եւ մայրամուտին, արդէն  
Գահիրէ ժամանած էինք, մարմնով եւ հո-  
գիտով կաղուերուած եւ քաղցր յիշատակ-  
ներով ուրախացած:

Օր. Հիլտա Պամմեան

Խարուկահանդէս —

Եզրպատահայ մարզական կեանքի ամէ-  
նէն նուիրեալ դէմքերէն մէկն է Պր. Թու-  
միկ Սէտեֆճեանը, որ ելկար տարիներէ  
ի վեր կը ծառայէ հայ երիտասարդութեան  
Ֆիզիքական եւ բարոյական կրթութեան:  
Ինք եղած է մէկը այն հիմնադիրներէն, որ  
հիմքը դրած է եզրպատահայ հետազօտու-  
թեան, «Արալատ» Ակումբին եւ «Նուպար»  
մարզարանին: Վերջապէս» ուսմիլրաւ մը,  
որ խօսքով եւ գործով նուիրուած է մեր

նոր սերունդին ևև իր անսպառ ճիշդվք, յարատեւութեամբը ևև օգտակար ըլլալու անզուսպ եռանդովը, պատուաբեր տեղ մը գրտուած է մեր զազուծի մարզական կեանքի պատմութեան մէջ:

Ահա, այս անձուէք մարզիկին ի պատիւ է որ Ապրիլ 21ին Հ.Մ.Բ.Մ.՝ նուարարի հետազօտիչները խորուկահանդէս մը կազմակերպած էին, որպէս յարգանքի սուրբ մը իրենց երկարամեայ Շրջանային պետին՝ Պր. Թումիկ Սեաֆճեանի, որ այլ չեւ իր տեղը տուած է նոր սերունդի զիտակից ուժերուն:



Հետազօտչական սովորութեան համաձայն, այս հանդէսին իրենց մասնակցութիւնը բերած էին Գալուստեան ևև Նուպարեան Ազգային վարժարաններու արիւնքն ու արեւոյճները: Աղեքսանդրոյ Հ.Մ.Բ.Մ.ի հետազօտիչները շնորհաւորութեան ևև զնահատանքի սիրուն նամակով մը, որուն ընթերցումը բրաւ Տիար Պողոս Սիմոնեան, իրենց մասնակցութիւնը կը բերէին այս հանդէսին, մինչ «Արարատի» սերները կը փայլէին իրենց անտարբերութեամբը ևև դատապարտելի լացակայութեամբը...:

Դրուակը վար առնուեցաւ «վերջալոյս»

ս»ի եղանակով. Գայլիկներու Աւագ Ունումի արարողութիւնը կատարուեցու ևև յատուկ սկսաւ դործադրուիլ Պր. Պողոս Սիմոնեանի առաջնորդութեամբ:

Խմբավարները դարնանային ծաղիկներէ հիւսուած զեղեցիկ մանեակ մը անցունցին իրենց թանկագին պետի վիզին: Կատարուեցան զանազան մրցումներ, սքէչներ ևև հետազօտչական խաղեր, ի մէջ այլոց ստիբիլին զուարճալի խաղը: Խօսք առաւ Պր. Սարգիս Պողիկեան, — հին մարզիկ մը ևև մեր մարզական կեանքին բաւազօյն ծառայողներէն մէկը — բացատրեց հետազօտչութեան էութիւնը, կարեւորութիւնը ևև օգտակարութիւնը, ևև հրաւիրեց բոլոր հայ ծնողները, որ իրենց զաւակները արձանագրեն մեր հետազօտչական շարքերուն մէջ:

Խօսք առաւ օրուն հիւրը՝ Պր. Սեաֆճեան, որ շնորհակալութիւն յայտնելով իրեն եղած պատիւին համար, բացատրեց զօհուրութեան ոգին զեղը, հետազօտչական կեանքի մէջ: Վերջին խօսողը եղաւ Արժանապատիւ Տէր Ալչամ Քհնյ. Պողոսեանը, որ ծանրացաւ ազգապահպանման դործին մէջ հետազօտչութեան վերապահուած զերին վրայ ևև սրահպանելով փակեց օրուն հաւաքոյթը:

— Ներկայ մը —

Հ.Մ.Բ.Մ.՝ Նուպար. Ակումբի ընդհառու ժողովը դումարուեցաւ 19 Մայիս 1963ին ևև ընտրուեցաւ նոր վարչութիւնը, որուն կազմը հետեւեալն է,

- Տիար Ալթիլ Թերզեան Առնապետ
- »» Յովհ. Քեհեաեան Բ. »»
- »» Յակոբ Էքսերճեան Ատենադպիր
- »» Հրանդ Գուլիումեան Գանձապահ
- »» Սերգոյ Սքէնճեան Խորհրդակալ
- »» Վարդան Առաքէլեան »»
- »» Լեւոն Նիքոթեան »»
- »» Յովսէփ Զիլինկիբեան »»
- »» Վահէ Սքէնճեան »»

ԽՄԲ. — Սրտագին յաջողութիւն կը մագրենք նորակազմ վարչութեան:

# Հ Ա Յ Կ Ե Ա Ն Ք

( Ս Փ Ի Ի Ռ Ք )

Յորդանան — Երուսաղէմ

Սուրբ Յարութեան Տաճարի նորոգութեան համար, ամիսներ առաջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր սրբա-տառ կոնդակով, սրտազին հրահրէր կ'ուզէր Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր հարազատներուն ու իրենց ամբողջական մաս նաւիցութեամբը սատարին ձեռնարկուած շինարարական աշխատանքին: Ուրախութեամբ կը յայտնէր որ Ն. Ս. Օծութիւնը ստանձնած է Հիւսիսային Ամերիկայի մէջ աղբէն իսկ կազմուած Կեդրոնական Յանձնախումբի նախագահութիւնը եւ որուն կ'անդամակցին Ամենապատիւ Տ. Եղիշէ Արք. Տէրախրեան, Պատրիարք Հայոց Սուրբ Երուսաղէմի, Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկաներու Սրբազան Առաջնորդները եւ Եւրոպայի Կաթ. պատուիրակ Սրբազանը, ինչպէս նաեւ տասնեւերեք աշխարհական հայեր, հանրածանօթ որպէս ազգասէր եւ զոհարբող ազգայններ: Կեդրոնական յանձնախումբը արդէն իսկ ձեռնարկած է աշխատանքի եւ Հիւսիսային Ամերիկայի զանազան հայաշատ կեդրոններու մէջ կազմած ենթախումբեր:

— Այս սարի, Ս. Զատիկի տօնին առիթով Ս. քաղաքը ունեցաւ հոծ ուխտաւորութիւն: Հայ ուխտաւորներու թիւը հասաւ մօտ 2500ի: Անոնք Ս. Երուսաղէմ ժամանեցին Ապրիլի առաջին եօթնեակի ընթացքին, եւ Ասագ շարժուան եւ Ս. Զատիկի հոգեգրաւ եւ մեծահանդէս արարողութեանց ներկայ դատուելէ վերջ այցելեցին նաեւ Ս. Երկրի զանազան սրբալայրները: Ուխտաւորներու ընդունելութեան յանձնախումբը բնաւ իր կարելին, ուխտաւորներուն տեղաւորման, Ս. Տեղերու տրուած

խմբական աջելութեան եւ բացատրութեանց առնչութեամբ:

— Կովիտասեան երգչախումբը: Ապրիլ 13ին, Ասագ Շարաթ (ձրագալոյց Ս. Զատիկի) կէսօրէ վերջ Պէյութէն ուխտաւորաբար Երուսաղէմ հասան քառասուն երկուսն անդամներէ բաղկացած Կովիտասեան երգչախումբը, առաջնորդութեամբ խումբին ղեկավար Տիար Գէորգ Գանտահարեանի:

Երգչախումբը չորս օր մնաց Երուսաղէմ եւ ճրագալոյցի երեկոյեան, ինչպէս նաեւ Զատիկուան Երկուշաբթիի պատրիարքական հանդիսաւոր Ս. Պատարագին ընթաց իր ձայնական շնորհը, առաւել փայլմը տալով այդ մեծահոգ արարողութեանց:

Կիւակի, 14 Ապրիլ, երեկոյեան ժամը 6:30ին, Փրէշներու սրահին մէջ, ի ներկայութեան Երուսաղէմի կառավարիչին Միաբանութեան անդամներուն եւ ժողովուրդի բազմութեան, երգչախումբը հանդէս եկաւ Համերգով մը: Մեներգեց Տիկին Արփինէ Փեհլիվանեան եւ իր դրաւիշ ձայնով հմայեց ունկնդիրները:

Թուրքիա —

Պոլսոյ մէջ, արժանատի շուքով ոգեկոչուած է Հայ Աւետարանական Եկեղեցւոյ կարեւոր դէմքերէն Վեր. Առաքել Կ. Պէտիկեանի (Գիսակ) մահուան 60րդ տարեկիցը, հովանաւորութեամբ թրքահայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Շնորհք Սրբազան Հօր: Հանդիսութեան ներկայ գրուած են Աշխարհի Եկեղեցիներու Յանձնաժողովէն Մր. Ուայլի, Ասորիներու Քրեպիտիոպոս Սամուէլ կղզեր, Տիար Վահան Թարթութեան, Թաղային Սորհուղներու, Սանուց Միութիւններու, դպրաց

դասերու, երգչախումբերու եւ մամուլի ներկայացուցիչները: Այս հանդիսութեան առթիւ գաղութներէն զրկուած են հեռազիններ եւ գրութիւններ, որոնք կարողացուած են: Գրութիւններ զրկած են Ամերիկայէն՝ Գիսակի որդին Վեր. Անդրանիկ Ա. Պետրիկեան, Ֆրանսայի Հայ Աւետ. Եկեղեցիներու անունով Փրոֆ. Խայկեան, Պէյրուէէն Վեր. Յովհաննէս Ահաշտեան, Չանսաէրի խմբագիր Պր. Մանասէ եւ Տիւրքի շալիանոյ Մառի:

Գործադրուած է գեղարուեստական ճոխ յայտագիր մը: Խօսք առած է նաև Ամեն. Տ. Շնորհք Պատրիարք Հայրը:

**ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐ**

Լիբանան

Հ. Բ. Ը. Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան կազմակերպած «Նաւասարդեան» Յիւ խաղերը, որոնք տեւեցին Ապրիլ 13, 14, 15, Սրբ. Զատիկի շաբաթական 3 օրերու ընթացքին, վերջ գլխաւոր աննախընթաց խանդավառութեան մէջ: Երեք օրեր շարունակ, աւելի քան 25.000 մարդասէրներ լրարուած հետաքրքրութեամբ հետեւեցան Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարանի դաշտին վրայ, Չարեհ-Նուպար Ակումբին եւ մարզաւանի մէջ կայացած պատգէթպոլի, փինկ փոնկի, աթլետիկի, թենիսի, եւ ֆութպոլի մրցումներուն, ինչպէս նաև մարզական այլ շարժումներուն: Նաև սարդեան Յիւ խաղերու եղբայրակիչ հանդիսութիւնը տեղի ունեցաւ Մարգարանի կեդրոնական դաշտին վրայ, 15 Ապրիլ, Երկուշաբթի կէսօրէ վերջ ժամը 1.30-ն սկսեալ: Օրուան յայտագրին մաս կը կազմէր Սափա-Անդրանիկ ֆութպոլի մրցում մը, աթլետիկի խաղեր չափական մրցանքներ եւ փառաշուք տողանցք:

Սափա-Անդրանիկ մրցումը վերջացաւ հաւասարութեամբ (1-1), իսկ աթլետիկ մի շարժումներուն առիւծի բաժինը խից Կիպրոսի Մելգոնեան Հաստատութեան երկսեռ մարզիկները:

Լիբանանեան ոստիկանական փողերախումբին հնչիւններուն տակ եւ առաջնորդուած՝ Լիբանանեան դրոշով, Նաւասարդեան խաղերու մեծադիր խորհրդանշանով եւ դրճագոյն դրոշակներու շարանով մը, Մելգոնեան Հաստատութեան մարզիկ-մարզիկուհիները, Յորդանանի պատգէթպոլիստները, Դամասկոսի աղջկանց եւ տղոց պատգէթի խումբերը, Թրիբոլի երկսեռ պատգէթիստները, սկստուները՝ իրենց Փան-Փարի խումբով, Չահլէի, Պէյրուէի «Անդրանիկ» ակումբի, Չարեհ-Նուպար ակումբի, Դարուհի Յակոբեան եւ Յովակիմեան-Մանուկեան վարժարաններու, հայ համալսարանական ուսանողաց երկսեռ միութիւնը, հեծանաւորդներու նորակազմ խումբը, երգի եւ պարի համոյթի եւ Վահրամ Փափաղեան թատերախումբի երկսեռ անդամները տողանցեցին մեծ խանդավառութիւն յառաջացներով: Իսկ պատգէթպոլի եղբայրակիչ մրցումները տեղի ունեցան Պէյրուէի Չարեհ-Նուպար ակումբի օրիորդաց խումբի եւ Դամասկոսի օրիորդներու խումբին միջեւ որ վերջացաւ առաջիններու յաղթանակով (40-29):

**Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԸՆԿԵՐԱԿՑ. Չ. ՊԱՏԳԵՍԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԷՁ**

Փետրուար 2ին, Շաբաթ երեկոյեան, Ընկերակցութեան Չարեհ-Նուպար ակումբին մէջ արտակարգ եռուցեռ մը կը նըմարուի, ուր պիտի դումարուի ընկերակցութեան վեցերորդ պատգամաւորական ժողովը: Մերձաւոր Արեւելքի գանձաւան երկիրներէն աւելի քան 47 երկսեռ պատգամաւորներ արդէն իսկ ժամանած են: Սոյն ժողովին կը մասնակցին նաև Լիբանանի Շրջ. Եանձնաժողովի ներկայացուցիչները, Պր. Երուանդ Տէմիւրճեանը եւ Փրոֆ. Բաշտեանի Թովմասեանը:

Ժամը 7ին, Երիտասարդացի Կեդր. վարչութեան Ատենապետ Պր. Սիսակ Վարժապետեան կը բանայ ժողովը բարի դարուստի պատշաճ ուղերձով մը:



Ապա Կեդր. վարչութեան քարտուղարը կը կարդայ տեղեկագիրը, որմէ պատճառով մերահասու կ'ըլլան ընկերակցութեան ունեցած գործունէութեան, մարդական եւ մշակութային մարզերու մէջ:

Տեղեկագրի ընթերցումէն ետք խօսք կ'առնէ Փրոֆ. Թովմասեանը եւ կը շեշտէ կարեւորութիւնը ու լրջութիւնը պատգամաւորական ժողովներու ըսելով թէ նման ժողովներ մեծ կշիռ ունին կազմակերպութեան մը ապագայ գործունէութեան վրայ: Փրոֆ. Թովմասեանի ելույթէն վերջ տեղի ունեցաւ օրուայ զիտանի ընտրութիւնը եւ ժողովին անշատանքները ընթացան համելաշի միջոցառումներ մէջ, յուճարով բազմաթիւ շուրջ հարցեր, որոնք օրակարգի վրայ էին: Ժողով տեւեց երկու օր: Հրատեսչի ճաշկերոյթը տեղի ունեցաւ Արագած պանդոկին շքեղ սրահին մէջ: Բաժակներ պարպուեցան Հ. Բ. Ը. Միութեան եւ Հ.Ե.Ը.ի գործերուն յանձնարարական մար: Պատգամաւորական ժողովի որոշումներէն մին, Ընկերակցութիւնը շիտակեան ֆոնտով մը օժտելու առնչութեամբ, ճաշի ընթացքին արդէն մարմին առաւ, վասնզի Հ.Բ.Ը. Միութեան Լիբանանի Շրջ. յանձնարարութիւն Գանձապահ Պր. Կարպիս Նապահան 500 Լիր. ոսկի նուիրեց սոյն ֆոնտին: Հանդանակութիւնը շարունակուեցաւ եւ շուտով գոյացաւ 3000 լիր. ոսկի: Վարդանանց Ասպետներու վարչութեան ներկայացուցիչները իրենց անտուկէն տրամադրեցին 3000 ոսկի եւ գոյացաւ 6000 ոսկի: Հանդանակութիւնը սկիզբէն շարունակուի մինչեւ որ Երեսօտարացը Պէյրութի մէջ սեփական չէնքով մը օժտուի:

Ճաշէն վերջ ներկաները յոտնկայս երգեցին Բարեկործականի եւ Երեսօտարացի քայլերգները եւ ժողովը փակուած յայտարարուեցաւ խանդավառ միջոցառումի մէջ:

— ՅՈՒՇԱՐԱՐ —

Լիբանան. — Պէյրութ  
— Ամբերկեան համալսարանի մէջ տօնուեցաւ Սայաթ-Նովայի ծննդեան 250ամ -

եակը, նախաձեռնութեամբ Համարդային Մշակութային Ընկերակցութեան:

Քեմանչահար Ռուբէն նուագեց, Տիկ. Զեփիլո Շանթ մեներգեց, Տիկիններ Ե. Մինասեան եւ Թ. Արարտեան ադադադները: Բանաստեղծ Մ. Իշխան ներկայացուց աշուղին կեանքը իսկ Ե. Տասնապետեան՝ գործը:

— Պր. Կիւրեան, միակ դադարով մը արտասանեց հայկենական մեծատաղանդ բանաստեղծ Պարոյր Սեւակի «Անլուի Հանգստանք»:

Յուխատան. — Արքեմ.

— Այնչեքի Բարեկործականի անդամուհիներէն այլի տիկին Սանդուխտ Վարդապետեան, իր խնայած 150 անդլիական հեշուն ոսկին կտակած է Հ. Բ. Ը. Միութեան, յատկացուելու համար աղքատիկ ուսանողներու, իր կրթաթոշակ:

— Հ. Բ. Ը. Միութեան Յուխատանի Կեդր. Մասնաժողովի տարեկան պարտահար Տիկիննց օժանդակ յանձնարարութի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ Փետր. 11ին «Աղբորոտ-Փայտա»ի ընդարձակ սրահներուն մէջ: Երեկոյթը բացուեցաւ Բարեկործականի քայլերգով: Մեր շնորհալի օրի բոլորը շուտով սպանցին վիճակահանութեան տոմսերը: Մասնաժողովի Ատենապետ Վահէ Աղապետ հակիրճ ուղերձով մը բացատրեց պարահանդէսին նպատակը, վեր առնելով Բարեկործականի կատարած դերը, մասնաւորաբար կրթական մարզին մէջ: Իր շնորհակալութեան խօսքը ըրաւ Տիկիննց Յանձնարարութի ինչպէս եւ նուիրատու անձեռու եւ վաճառատանց հասցէին:

Ֆրանսա. — Փարիզ.

— Զէյթունի զիւցադնամարտին 100ամեակը տօնուեցաւ Մարտ 9ի Շաբաթ դիշերը հայկենարար Զէյթունցիներու նախաձեռնութեամբ, նախադասութեամբ Պր. Լեոն. Չորմիսեանի, որուն առաջարկով «Զէյթունցի ենք» խմբերգը երգուեցաւ ընդեր ներկաներուն կողմէ: Նախադասի բացման խօսքէն վերջ, Զէյթունցի հայրենա -

կից Ն. Պշտիկեան ճառ մը կարգաց՝ դեռ ցազնամարտի դրուազներուն առնչու թեամբ: Գրաւոր ուղեբճ մը բրաւ Պր. Պաղ տասարեան, զէյթունցիներուն գործակցած վեց հնչակեան գործիչներու յիշատակին նուիրուած: Եղան արտասանութիւններ Վարուժանէն եւ Վահան Թէքէեանէն:

— «Վարդանանց ասպետներ»ու Միութիւնը սարքեց յիշատակի երեկոյթ մը՝ Կազմուք երգերու երգահանուէրով, որ տեղի ունեցաւ Մարտ 10ին, Շոփէն սրահին մէջ: Ծանօթ դաշնակահար Ս. Եսպրուեան նուագեց Պախէն, Պեթհովէնէն, Պապաճանեանէն եւ Սաչատուրեանէն:

Վերապատուելի Գ. Սիւլեան Վարդանանց պատմութիւնը նկարագրեց եւ շինիչ դասեր հանեց սխրալի այդ դիւցազնամարտէն:

Երգչախումբը, Արամ Ճիղմէճեանի ղեկավարութեամբ երգեց Կոմիտասեան «Տէր Կէցո»ն եւ Կոմիտասեան պատարագէն զանազան հատուածներ: Երգչախումբը փաբիղի Սրբ. Էօսթաշ եկեղեցիի Փրանսացի ծանօթ երգիչներէն կը բաղկանար, որոնք հայերէն լեզուով այնքան հարգատօրէն երգեցին եւ արժանացան ընդհանուր զեւհատանքի:

— Դպրոցասէրի սանուհիները Մարտ 10ին ցերեկոյթ մը տուին, որ նիւթապէս եւ բարոյապէս մեծ յաջողութեամբ պսակուեցաւ:

Հանդէսը բացուեցաւ «Մարտէյէզով» «Ծաղկիւր Ազատ իմ Հայրենիքով» եւ «Դըպրոցասէրի» քայլերգով, ղեկավարութեամբ ծանօթ իմբալար եւ երգահան Ա. Մեուսմենցի: Ներկայացուեցաւ «Թագաւորնբու դիշերը», Շէքսպիրի քնքարձ թատերախաղը: Երկրորդ թատերախաղն էր Օր. Արփինէ Տաւրեանի «Այսպէս մեծցան անոնք»ը:

Տեղի ունեցան արտասանութիւններ, խմբերգներ եւ պարեր, հայկական ոգիով եւ հայադրոջմ նկարագրով: Փաբիղի դըպրոցասէրի մէջ կը դաստիարակուին 82 ա-

շակերտուհիներ:

— Գայուստ Կիւրպէնկեան Հիմնարկութիւնը 1078 տարիի գումար մը յատկացուց «Կոմիտէ Պրեմիոն»ի, որպէսզի շարունակէ իր մշակութային գործունէութիւնը: Յատկացումը կ'ընդերկէ 1962-1964 եռամեայ շրջանը:

— Հայ Ժողովուրդը կորսնցուց իբր թանկագին բարեկամներէն Փրանսացի Փօլ տիւ Վէտան որու յուշարկաւորութիւնը կատարուեցաւ Փաբիղի Նոթր Ծամ Տիւ Պօն Սըքուր հիւանդանոցին մատրան մէջ: Հայոց կողմէ ներկայ էին Տէք Գրեւ եւ Տէք Ներսէս Հաջեբը եւ Հայ Կաթողիկէ Առաջնորդ Կարապետ Եպ. Մմատունին, ինչպէս եւ նախկին Հայ ոսգմիկներ, իրենց դրոշներով եւ ծաղկեպսակներով: Ողբացեալը հրատարակած է Կիլիկիոյ Չարչարանքը (Լա բասիոն տը լա Սիլիսի, 1919-1922) ծաւարան հատորը, որուն ընթերցումը ջերմապէս յանձնարարելի է ամէն հայու: «ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԱՏԵԱՆ»Ը՝

ՁԲԱՆՍԵՐԷՆ

«Սովետական Հայաստան» (Փետր. 1962) կը գրէ—

Սնցեալ տարի Փաբիղում հրատարակուեց միջառաջեան հայ մեծ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու «Մատենա Ողբերգութեան» սոնետը: Գրքի թարգմանիչն է Հ. Սահակ Քեչիշեանը, որ տասնեւչորս տարիներ ջրտնջան աշխատանք է կատարել թարգմանութեան վրայ:

Նարեկացու սոնետը առաջին անգամ է ամբողջութեամբ թարգմանուած օտար լեզուով, այն էլ՝ չափածոյ: Թարգմանախընդ ներածութեան մէջ նշում է՝ որ ցարդ կղել են սոնետի մասնակի թարգմանութեան փորձեր: Իրանցից առանձնապէս նշանակալից էր Աբշակ Չօպանեանի կատարած երեսուն գլուխների թարգմանութիւնը (1906 թուականին): Իտալացի հայագէտ Ուպարտոյ Ֆալտադիի թարգմանութեամբ՝ 1922 թուականին լոյս են տեսել երկու գլուխներ: Պոէմի թարգմանութեան փորձեր են կա-

տարել նաև Ֆելիքս Նելին և ուրիշներ :

Լիւք-Անտրէ Մարտիլլ 1953 թուականին ի լոյս ընծայած իր «Գրիգոր Նարեկացին և հին հայկական պոեզիան» վերնագրուած ուսումնասիրութեամբ մէջ բերել է «Ողբերգութեան Մասեան»-ից երևաունեակէկ գլուխներէ Փրանսէլէն թարգմանութիւնը, որոնցից տասնեւեօթը պատկանում են Արշակ Զօպանեանի գրչին :

Հ. Սահակ Բեչլիշեանի իրականացրած ամբողջական թարգմանութիւնը կատարուել է Նարեկացու պոէմի գրաբար բնագրից : Թարգմանիչը ջանացել է պահպանել բնագրի կշիռները : Երկը թարգմանիչի կողմից տողատուած է :

Գրքի սկզբում բերած մասնագիտական տեղեկութիւններից բացի, թարգմանիչը օտար ընթերցողներին համառօտակի ծանօթացնում է Նարեկացու կեանքին և ժամանակաշրջանին :

Պոէմի առանձնայատկութիւնների մասին ընդարձակ յառաջաբան է գրել Պէյրուիի համալսարանի պրոֆեսոր Հայր Մըարրիանը :

**ՆՈՒՒՅՐ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ**

Այլովի Հայ Լուս. Ուսումն. Ընթացքին Ուսիրթնուների մէջ գումարուած ժողովին Ընկերութիւնը ինքիւնքը լուծելու հռչակելով, միաձայնութեամբ իր պատրաստի գումարը 1387 տոլար 76 սէնթը յանձնած է Հ. Բ. Ը. Միութեան, յատկացուելու համար կրթական նպատակներու :

**Հիւսիսային Ամերիկա. — Նիւ Եորք**

Կոմիտաս քառակը. — Փետրուար 23-ի Շարաթ երեկոյեան, Լինքլն Սենթրի Ֆելհարմոնիքի ընդարձակ սրահը իր ամբողջ ամբողջութեամբ լեցուած էր երաժշտասէր և ազգասէր ընտրանի հոծ բազմութեամբ մը, որոնց դէմքերուն վրայ կարտացոլար երանութեան յոյսեր, շաղախուած իտր սիրով և ազգային հպարտութեամբ :

Ներկաներուն 80 տոկոսը կը կազմէին հայերը : Յնձադին ծափերու մէջ մուտք

գործեցին «Կոմիտաս» Բառեակի անդամները : Առաջին կտորը Պեթհովէնի թիւ 59 քառեակն էր : որուն մեղեդինքը կատարեալ և ճիշտ ներդաշնակութեամբ նուազուեցան : Յայտադրի երկրորդ մասը կը բաղկանար Եղուարդ Միրզոյեանի և Շոթթաքովիչի ստեղծագործութիւններէն, որոնք ևս արուեստի կատարեալ հասկացողութեամբ նուազուեցան : Յայտադրի վերջին մասը կը կազմէր Ռաֆիլի էֆ Մայօր քառեակը, որուն ունկնդրութիւնը գերապոյն վայելք մը եղաւ ներկաներուն համար :

Բուն ծափերու տարափին տակ, քառեակը յայտադրէն դուրս, նուազեց նաև Կոմիտասէն, և հայկական սիրուած ժողովրդական երգեր :

Յարգանքի երեկոյթ. ի պատիւ

Ենով Արմէնի.

1963 Մարտ 16ին, Շարաթ երեկոյեան Նիւ Եորքի Ս. Սաչ Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ քաջամանօթ գրազէտ և ուսուցիչ Ենով Արմէնի 60-ամայ գրական հասարակական գործունէութեանը նուիրուած յորելանակալն երեկոյթը նախագահութեամբ Սեպրիկահայոց Առաջնորդ Գեր. Տ. Սիրոն Մրք. Մանուկեանի : Սոյն երեկոյթին Նիւ Եորքի Հայ մասնորականութեան ամբողջութիւնը մաս կը կազմէր յորել նախան կարգադիր յանձնախումբը պատուելու համար ծերունազարդ յորելեարը :

Բացման խօսքը արտասանեց ամերիկահայ բանաստեղծ-գրազէտ Յակոբ Անտոնեանը :

Ապա խօսք տոին Պր. Արշալիր Բաղբունի և Տիկին Մառի Դաւիթեան : Վեր. Ա. Ա. Պետրիկեան ներկայացուց բզմա վաստակ յորելարի կեանքը և շնչոնց մանաւանդ անոր ծայրայեղ նախանձախնդրութիւնը, մեր ոսկեդնիկի մաքրութեան, ճշգրտութեան մասին, ինչպէս նաև հասարակական բոլոր երեսօթներու նկատմամբ : — Կարգացուեցաւ յորելեարին նամակը Հայ դպրութեան ու անոր պահպանութեանը նուիրուած :

Գնահատանքի վերջին խօսքը ըրաւ Առաջնորդ Սրբազան Հայրը: Կարդացուեցան բազմաթիւ անհատական հեռագիրներ և նամակներ: Ներկաները հիւրասիրուեցան սուրճով եւ քաղցրեղէններով:

Ուսար

Փետրուար 21ին, Ուսարի Արթ Միդիումի մէջ, 1500 հոգինոց երաժշտաակէր բազմութեան մը ներկայութեան Հայաստանցի չորս հեղինակաւոր արուեստագէտներէ բաղկացած Կոմիտաս Քառեակը ելոյթ ունեցաւ, հմայելով իր ունկնդիրները:

Յայտարարը տեւեց երկու ժամ, եւ նուազուեցան Մոցարթի, Միլդոյեանի (Հայաստանէն), Շոպէնի, Բեթովենի ստեղծագործութիւնները: Ներկաներուն բուն ծափերուն ի պատասխան, Քառեակը նուազեց նաեւ հայրական ժողովրդական երգ մը:

Փեսնտիմա.

Ս. Գր. Լուսաւորիչ Հայց. Առաք. Եկեղեցին իր անցեալ թէ ներկայ պատմութեան մէջ անմոռանալի օր մը եւս արձանագրեց 1963 Փետրուար 9ի Շաբաթ օրը երեկոյեան ժամը 7ին: Խուճերամ բազմութիւն մը լեցուցած էր Հընթիւնի Շէրիթըն հոթէլի մէջ սրահը, վայելելու համար փառաւոր ճաշը եւ բերելու իր մասնակցութիւնը եկեղեցայինութեան գործին:

Սեղանը օրհնեց Գեր. Տ. Բարսէն Եպս. Վարժապետեան: Ծաղն վերջ հրամցուեցաւ ճոխ յայտազիր մը: Առաջին խօսողը եղաւ ճան Գիւրքեան եւ թելադրանքներ ըրաւ եկեղեցին կառուցանելու միտքով: Եկեղեցաակէր Տիկեանց Միութեան կողմէ խօսեցաւ Տիկ. Զարմիկ Փափազեան: Եղան մենեղաներ եւ նուազ: Վերջապէս խօսք առաւ Գալիֆորնիոյ Հայց Առաջնորդ Տ. Թորգոմ Եպս. Մանուկեանը, որ իր ուշադրաւ խօսքերով ըստուած պահեց ներկաները եւ մղիչ ոյժը հանդիսացաւ որ ներկաները լսին բանան իրենց քակները: Տիար Զարլզ Բարիկեան, հանդանակիչ յանձնախումբին ատենակետը, հանգամանակութիւնը բացուած յայտարարեց, եւ կէս

ժամուան մէջ տկնկարուած դումարը գլեց անցաւ եւ որուն վրայ Ալաճանեան եղբայրներու 10.000 սորբրի նուիրատուութիւնը աւելնալով, ներկաներուն խանդավառութիւնը իր դազաթնակէտին հասաւ: Հետեւեալ օրը, Կիրակի առաւօտ, Սրբազան Հայրը պատարագեց ու քարոզեց Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, որ լեցուած էր ամբողջ տարողութեամբ:

Նիւարք.

Հայց. Առաք. Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը եւ Միական Խորհուրդը դնահատելի մտածումը ունեցած են վերջին երկու տարուան ընթացքին պատուելու համայնքին երկարատեւ ծառայողները, հրապարակային դնահատութեամբ: Այս տարուան դնահատանքի մեծարանքը տեղի ունեցաւ 22 Փետրուար 1963ին, երեկոյեան թէյտեսեղանով: Պատուոյ աթոռը գլուխու հրախրուեցաւ Պր. Խաչատուր Զօթեանը եւ օրուան Ատենակետը արտայայտուեցաւ յիշեալին ազգային եւ եկեղեցական գործունէութեանց շուրջ: Յաջորդաբար հրախրուեցաւ Պատուոյ հիւրին Տիկինը, պուտորը եւ փեսան, բոլորն եւ հարաւ, որոնց անտկնկալ երեւումը յուսմանախան ուրախութիւն պատճառեց օրուան պատուոյ հիւրին: Կարդացուեցան հեռաւոր ազգականներէ շնորհաւորական ձեռագրիներ: Հոգեւոր Հովիւ Տէր Մամբուէքէնյ. իր շնորհաւորութիւնները եւ դնահատանքը յայտնեց Տիար Զօթեանի, անոր երկարատեւ նուիրեալ ծառայութեանը համար: Այս առթիւ Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ նուիրուած դնահատանքի գորգակոծակը անցուց անոր կուրծքին:

Եր. Խաչատուր Զօթեան Նիւարքի Հայ համայնքին մէջ, երկար տարիներ օգտաւոր ծառայութիւն մատուցած է, գլխաւորաբար Հայց. Առաքել. Եկեղեցւոյ եւ Հ. Բ. Ը. Միութեան:

Հայ Աւետարանականներու գեղեցիկ ձեռնարկ. Պեղմոնթի Առաջին Հայ Աւետարանական Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ

յոյժ գեղեցիկ եւ ներշնչել յիշատակութեան արարողութիւն մը նուիրուած Վարդանանց Քաջերու սմմեռ յիշատակին: Յարգանքի այս սոնակատարութիւնը սարքուած էր Ուսման թաղի Հայ Մարտիրոսաց Աւետարանական եկեղեցւոյ եւ Պեմբոնթի Առաջին Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւներուն նախաձեռնութեամբ եւ Ուսարի, Փրակտեանի, եւ Սէյլլմ Տրիոյի Հայ Աւետարանական եկեղեցիներու հովիւներուն մասնակցութեամբ: Երեւանի էրնա՝ վերսիւշալ հինգ եկեղեցիներու անդամները եւ բարեկամներ: Երգեցողութիւնը լսատարուեցաւ Ուսման թաղի եւ Պեմբոնթի եկեղեցիներու միացեալ երգչախումբերուն կողմէ: Ժամը ճիշդ 7ին պաշտամունքը սկսաւ Հայ Մերով: Վերապ. Չարիֆեան, Սէյլլմ Տրիոյի երիտասարդ հովիւը, զմայելի եւ բարձրորակ հայերէնով մը, հոյսերով եւ ներշնչելի պատգամ մը տուաւ Վարդանանց դիպացանամարտին Հայ ազգային եւ կրօնական կեանքին վրայ թողուցած անկորնչելի դրոշմը պատկերացնող:

Վեր. Հատիսեանի անդերբէն չարոզէն վերջ, կատարեալ ներգաշնակութեամբ միացեալ երգչախումբը երկնց երեք շարականներ, նաեւ Ալան Յովհաննէսի յորինած «Փրէյդ Եի Տհը Լորտ»ը: Երգեհոնը նուազեց «Լոնց Ամսեւը»: Երգեհոնի ժամը 8.45ին աւարտեցաւ այս արարողութիւնը եւ ներկաները մեկնեցան այդ սրբալոյս բէն, անկամ մը քաղաքով իրենց էութեան մէջ, վերաբարձումը այն բոցին որ ասանդէնի դարերէ ի վեր կը հրատարակը վերանորոգէ հայութեան սիրտը եւ դանձոք կը վառէ հայրենիքը եւ հաւատքի սիրով:

Նիւ Ինկլենտի Երթանցը եւ Խնամատուրը Նիւ Ինկլենտի հայութիւնը սիրով եւ նուիրումով կառուց Հայ խնամատուն մը, որ թեւակիրած է իր չորրորդ տարին: Հայ Տարեցներու այս խնամատունը եւ Ազգաքինարանը, ամերիկեան հիւանդանոցներու քննութեան պահանջած բոլոր օրէնքները

լիովին կը դործադրէ, որոնց քննիչները իրենց տեսական եւ ուշադիր հսկողութեանը տակ կը պահեն այս հաստատութիւնը: Խնամատուն այն բնակիչները, որոնք կը առապելն Ֆիլիքսաշան, մտային ջգային կամ յուզումնային նկարագրիներէ, կը ստանան իրենց վիճակին համապատասխան հսկողութիւն եւ խնամք: Հաստատութիւնը ունի 28 հիւանդապահուհի, նախընտրաբար հայ, որպէսզի բնակիչները լեզուական հասկացողութեան դժուարութիւն չունենան: Կերակուրները հայկական ճաշակով եւ հայ կարող խնամարար մը միջոցաւ կը պատրաստուին: Մտնելի մասնաւոր դրութիւն շաքարախտաւորներու եւ այլոց համար: Հայկական եւ ամերիկեան անդորրաւէտ երաժշտութիւնը կ'ուղղէ շնչքին սմէն մէկ անկիւնը եւ հայկական ջերմիկ մթնոլորտ մը կը տիրէ ամբողջ հաստատութեան մէջ: Խնամ մը հայ եւ ամերիկացի բժիշկներ կանոնաւոր կերպով կ'այցելեն խնամատունը եւ իրենց խնամքը կը շտայեն պատուպարեալներուն: Վերջապէս Պոսթըրի հայ հոգեւորականները, եկեղեցիներու դպրաց դասերը, հայ գաղութներու ուսանողները եւ դանազան երգչախումբեր յաճախակի կ'այցելեն խնամատունը, կը մխիթարեն կը բարոյցեն եւ ուրախ տրամադրութիւն մը կը ստեղծեն տարեցներուն համար: Մէկ խօսքով, հայկական այս սքանչելի հաստատութեան մէջ, մեր պատուական տիւրիներուն եւ օրիորդներուն հիւնարակային խնամքներուն յանձնուած հայ տարբէց հայրիկներն ու մայրիկները, ընտանեկան սրտաջերմ մթնոլորտ մը կը վայելեն:

— «Քէմփ Նուպար» — Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի Կեդ. Յանձնաժողովը ամառնային զէմփ մը հաստատած է ամերիկահայ փոքրիկներուն համար, Նիւ Եորքի շրջանին մէջ: Այս անջութեամբ կարգադրութիւն մը բրած է Նիւ Եորք քաղաքէն 100 մղոն հիւսիս դրոնուղ զէմփի մը անկախանաորով հեռ, զոր այս ամառ 7-14 տարեկան երկսեռ փոքրիկները պիտի

կրնան՝ օգտագործել, վայելելով կազմուցիչ արձակուրդի եւ հայկական միջնորդի մը բոլոր բարիքները: Քէմփի սնորհաք կեանքին մաս պիտի կազմեն պտոյտներ, մարզական խաղեր, ձեռարուեստ, լողանք, երաժշտութիւն եւ այլն: Մասնաւոր հոգ պիտի տարուի մեր փոքրիկներուն հայերէն լեզուին ընտելացնելու եւ մեր մշակութիւն ճաշակը տալու, այնպիսի ձեւով մը որ անոնք կարենան մարտել: Քէմփի լման շքանք պիտի տեւէ ութը շաբաթ:

Շիֆալօ —

Սաստիկ ցուրտին ու համաճարակի բռնոյթ ստացած պաղաւտութեան պատճառաւ շատեր զրկուեցան Միութեան Փետրուար 21ի հետաքրքրական դասախօսութիւնէն: Բարեկնոյր Յովհաննէս սարկաւազ Գասպարեան, Ս. Ներսէս Ծնորհալի Աստուածաբանական վարժ. ռեսանդներէն, հրաւիրուած էր խօսելու «Հայ Եկեղեցւոյ Երգեցողութիւնը» նիւթին շուրջ: Դասախօսութիւնը տեղի ունեցաւ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ սրահը:

Բարեկնոյր դասախօսը, ի միջի առջոյ ըսաւ. — Հայոց պատարազը 900 տարեկ փեր մնացած է նոյն ձեւին մէջ, բայց փոխուած են անոր եղանակները: Անոր ծայրագրութիւնը առաջին անգամ տեղի ունեցաւ 1875ին: Այս աշխատանքը մշակեցին Եկմալեան եւ Կոմիտաս, որուն գործը կրօնաւարտ մնաց: Անմահ վարդապետին աշակերտներէն Վարդան Սարգսեան, Մարտիրոսյէն, դայն լրացուց եւ ներկայիս կը նօթագրէ չորս ծայրի եւ երկեսոնի համար, հայերէն եւ անգլերէն բառերով:

Տիկ. Քէչեան իր մեղրանոյշ ճայնովը երգեց Զիլինկիբանի, Եկմալեանի եւ Կոմիտասի «Հայր Մեր»ը, նոյնպէս Եկմալեանի «Սուրբ Սուրբ»ը:

— Յուշարար — Միութեան ամառկերը ամէն ամիս կը հրատարակուի, հայերէն բաժինը 10.000 օրինակով:

— Ընթացիկ տարույս (1963) դարնան

ուսումնական շրջանին Միացեալ Նահանգներու մասնադիտական վարժարանները յաճախող հայ ուսանողներուն 6300 տղարի փոխառութիւն մը բրած ենք: Անցեալ տարի (1962) այս փոխառութեան գումարը եղած է 10.000 տոլար, ինչպէս նաեւ 2000 տոլարնոց երեք մրցանակ-կրթաթղթակներ, սահմանուած էին երեք փայլուն ուսանողներու համար:

### ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ

— 1962 Օգոստոսին ըրացաւ մահուան 35ամեակը ազգային հերոս Զօրավար Անդրանիկի: Հայաստանի պետական կեդրոնական պատմական զեւանի վարիչը՝ Գրիգոր Յարութիւնեան, զիմած է հերոսին մըրհոջ՝ Նուարդին, որպէսզի զիւանին զրկէ իր արամադրութեան տակ պանուղ փաստաթուղթերը, նամակները եւ այլ նիւթեր, որոնք աղերս ունին մեծ մարտիկին կեանքի եւ գործունէութեանը հետ: Գրիգոր Յարութիւնեան խնդրած է նաեւ որ, տեկինը զրէք կամ զրեկ տար իւր յուշերը: Իւանին վարիչը կը յայտնէր թէ ձեռնարկուած է Զօրավար Անդրանիկի կեանքին եւ գործին հայոց վաճառութեանը, տըպուած եւ անտիղ զրութիւններու հաւաքման: Սփիւռքահայ, մասնաւորապէս ամերիկահայ մշակութային եւ հայրենակցական Միութիւններ եւ ծանօթ անհատներ արդէն վերսրիշեալ զիւանին արամադրութեանը տակ զրած են զիւրքեր եւ զրութիւններ, նամակներ եւ պատկերներ: Պիտի սըպագրուի Անդրանիկի հերոսական գործունէութեան վերաբերեալ ստուարածաւալ հատը մը, զոր պիտի խմբադրէ զիտութիւններու Դուհար-պրոֆեսօր Արամայիս Մլնացականեան:

— Հայաստանի բնակչութեան քիւր. — Երեւանի վիճակագրական զբառնեակին կեդրոնական վարչութիւնը կը ծանուցանէ թէ, ներկայիս Հայաստանի բնակչութեան

թիւն է երկու միլիոն քսանութէկ հազար :

1920ին, Հայաստանի բնակչութեան թիւն էր եօթըհարիւրըսուսն հազար :

— Ծաւիղ .— Ապիսագիրոյ Սոխում քաղաքին մէջ (Սեւ ծովու եզերք) լոյս տեսած է «Ծաւիղ» վերնապիւրով դիւրք մը, որուն մէջ հաւաքուած են սոյք քաղաքին մէջ ազրոյ եւ զործոյ երկատարող զրոյներու արտադրութիւնները : Այդ զրոյները հիմնած են արդէն միութիւնն մը, որ իրարու կը զօլէ : զրականութեան սիրով — նոյն ազգին զաւակները :

«Արծուաբերդ» օպերան բեմադրուեցաւ Մոսկուայի համամիութենական սիւնազարդ դահլիճին մէջ, մայրաքաղաքին ականաւոր ղէմքերու, պետական զործիչներու եւ արտեստագէտներու ներկայութեան : Գլխաւոր դերը ստանձնած էր անուանի երգչուհի Տաթևիկ Սահանդարեանը : «Արծուաբերդ» օպերայի առաջին ներկայացումը պատիւ բաժնուեցաւ Մոսկուայի ռատիոկայանէն եւ արժանացաւ ընդհանրական զնահատանքի :

Այս օպերային հեղինակն է նուազա՝ հան Անդրէաս Պապայեան՝ Հայաստանէն :

— «Հայրենի կամարներուն տակ» .— Այս է կոչումը պատկերախաղի մը որ վերջերս պատրաստուած է Հայաստանի մէջ, եւ որ ցոյց կուտայ 1962ին հայրենիք վերադարձող հայերը : Պատրաստուած է նաեւ «Մեարոյ Մաշտոյ» շարժանկարը, որ ցոյց կուտայ Հայաստանի եւ արտասահմանի մէջ ի պատիւ հայ զգրութեան հիմնադրին տեղի ունեցած հանդէսները :

Սիամանթոյի դիւանը .— Գրականու թեան եւ արուեստի հայկական թանգարանը Փարիզէն ստացաւ հայ հռչականուն նահատակ-բանաստեղծ Սիամանթոյի մեծարժէք դիւանը, զոր մինչեւ այսօր գուրդու թանգրով պահած էր նահատակին քոյրը՝ Տիկ . Ջապէլ Համբարձումեան : Չէք կրնար առանց խոր յուզումի եւ վրդովումի կարդալ Սիամանթոյի այն բացիկները՝ զորս ստարաբախտ բանաստեղծը իր արքայազնութենէ՝ Այաչի բանտէն ուղղած էր իր հարազատներուն :

— Անդլիացի աշխարհահռչակ բանաստեղծ Լորտ Պայրլնի ծննդեան 175ամեա՝ կին առթիւ, երեւանի մէջ տեղի ունեցաւ ցուցահանդէս մը : Այցելուները հիւսիկ դիտեցին զիւնուոր-բանաստեղծի երկերուն շքեղ եւ հազուագիւտ հրատարակութիւնները, անոր կեանքին եւ զործին հետ կապ ունեցող զիւրքերը, երկերուն թարգմանութիւնները, ի շարս որոնց նաեւ հայերէնները :

— «Վարդաճաճ»-ը որ Դերենիկ Երկաթի (Դեմիրճեան) հոյակապ ստեղծագործութիւնն է, թատերախաղի վերածուած է Հայաստանի մէջ եւ յաճախ կը բեմադրուի մեծ յաջողութեամբ : Այս գեղեցիկ գործը Ֆրանսերէնի սկսած է թարգմանել Ֆրանսահայ տաղանդաւոր վիպագիր Վիքթոր Կարտան (Վահրամ Կաքաւեան : «Սիւր» հրատարակչական տունը, որ զանազան նախընթան մրցանակաւորներու գործերը ի լոյս ընծայած է, ստանձնեց նաեւ Վարդանանքի հրատարակութիւնը :

### ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԸ

-- Ո՛ւր քս գնում,  
Շողոզուն բար :  
— Ո՛ւր կ'ըն կայ,  
Պայքար ու հուր :  
Ջարկեմ Ջարին,  
Փրկե՛մ բարին,  
Ուրախ կեանք տամ  
Մանուկներին —  
Կեանքի սիրուն  
Ծաղիկներին :  
Յաղքեմ, ետ գամ,  
Մտնեմ պատեան,  
Խաղաղ բնեմ  
Որ ամենքը  
Եւ ամենուր  
Ինձ անուանեն  
Փրկարա՛ր թուր :

ԱՐՇ. ԴԱՐԵՆՅ

# ՊԱՏԱՆԻ ՔԵՐԹՈՂՈՒՅԻՆ

Միայն մեր գրական շատ նեղ շրջանակները ծանօթ են այս անունին, հակառակ որ ան արժանի էք աւելի լայն շրջաններու ուշադրութեան: Հերանոյշ Արշակեանը կրնար մեր անցեալի գլխաւորութեան ամենասիրուած անուններէն մէկը դառնալ եւ տեղ գրաւել նոյնպէս վաղաթառամ բանաստեղծներու Դուբանի եւ Մեծարենցի կողքին, եթէ ունենար գէթ քանի մը սուրուան ստեղծարարական կեանք եւ համէք երիտասարդական հասակի . . . Արշակեանը ծնած է Կ. Պոլսոյ մէջ 1887 Յուլի 28ին, եւ ըր: Կը յաճախէ Պոլսոյ թաղերէն Մաքրի-27ին:

Երեք տարեկանին կը կորսնցնէ հայրը: Կը յաճախէ Պոլսոյ թաղերէն Մաքրի-գիւղի Քոյրերուն վարժարանը եւ ապա Պէշիկթաշի Մաքրուհեան դպրոցը: 15 տարեկանին կը հեռանայ դպրոցէն եւ մօրը եւ պարագաներուն հետ կ'առանձնանայ Պոլսոյ մէջ արուարձանը: Դուբանի եւ Մեծարենցի հիւանդութիւնը (թոքախտ) կը ծծէ նաեւ պատանի Հերանոյշի կեանքի հիւթերը եւ այդ տառապալից կեանքը կ'ընդհատուի իր արշալոյսին: Աշակերտութեան տարիներուն փոքրիկ Հերանոյշը ցոյց կուտայ արտակարգ ընդունակութիւններ. 12 տարեկան կը գրէ հայերէն եւ Փրանսերէն բանաստեղծութիւններ:

Իր միտքը կը հասցնենայ գարձանալի արագութեամբ քանի մը տարուայ ընթացքին արդէն հիմնապէս ծանօթացած է հայ գրականութեան եւ կարգացած Շեքսպիր, Բայբըն, Լամարթին, Հիւլիօ . . . : Բացի բանաստեղծութիւններէ, կը սկսի գրել նաեւ արձակ գործեր որոնք կ'իստա կը մնան: Թողած նամակներուն վրայ — ինչպէս Դուբանի գրածներուն — կ'երեւայ իսկական դրօշմը:

Հերանոյշ Արշակեանի բանաստեղծութիւններէն միայն 24ը լոյս տեսած են, իր

մահէն 5 տարի յետոյ, Պոլսոյ իր գրական բարեկամներուն միջոցաւ: 1922ին, Գրա-կանագէտ Սիմէոն Յակոբեանը Վիեննայի մէջ լոյս ընծայած է «Հերանոյշ Արշակեան» խորագրով իր գրքոյկը որ մինչեւ այժմ երած միակ աշխատութիւնն է՝ նուիրուած վաղաթառամ բանաստեղծուհիի կեանքին եւ գործին: Վերջնայ Հայկեստանու սրբտաղին ուշադրութիւն նուիրեց Արշակեանին, լոյս ընծայելով անոր բանաստեղծութիւններու գրքոյկը «Հոգիներու Արցունք»ը խորագրով: Գրքոյկը կազմած է ներածականը գրած է գերասան Ազման Կոթիկեանը (պոլսեցի), իսկ խմբագրութիւնը կատարած է Ս. Տարոնցին:

Հերանոյշ Արշակեանի շրջապատը եւ անձնական կեանքի պայագաները ուժեղ ազդեցութիւն մը գործած են իր բանաստեղծութեանց վրայ, որոնք խորապէս տառապած պատանուհի մը յոյգեցուն, մտածումներուն արգասիքն են, պատանուհի որ սակայն շատ կանուխէն ճաշակած է կեանքի դժոխարտութիւնները եւ բացի անձնական ողբերգութեան տեսած է նաեւ ընկերային կեանքի սխուք երեւոյթները, որոնք կ'արտացոլան իր բանաստեղծութիւններէն:

Արշակեանի բանաստեղծութիւնները ինք նախիպ են եւ յուզիչ, գրուած են քնական եւ ինքնակ կերպով, աշխատ ինչպէս ծաղիկին ծաղկիլը, մանուկին երգը կամ տառապող սիրտին արտասուլը: Արշակեանի գրատակցական կեանքը, սկիզբի օրերէն իսկ, — մօտաբար մահուան նախազացումով կը տոջորուի, եւ որ իր բանաստեղծութեան հիմնական գիծը կը դառնայ:

Հերանոյշ Արշակեանի բանաստեղծութիւնները չ'ի հարկէ կատարելութիւններ չեն: Անոր տաղանդը հնարաւորութիւն չունեցաւ բացուելու, նա չեղաւ ո՛չ Դուբան եւ ո՛չ ալ Մեծարենց, սակայն ինքնատիպ կան անոր երգերու գողարիկ փունջը կը վկայէ որ մենք դաժան անցեալին զոհ ենք սողած մատղաշ բանաստեղծական հողի մը:

ԵՐ ՀԱՑՈՒՇԻ  
ամփոփած